

ՔԱՂՎԱԾՔ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի որոշումից

Երևան, 22 ապրիլի 2020թ.

ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը 2020թ. ապրիլի 22-ի նիստում անցկացրեց դատախազ Կ. Հ.-ի ատեստավորումը:

Հաշվի առնելով հարցազրույցի արդյունքները և ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 14-րդ մասի 2-րդ կետով և ՀՀ գլխավոր դատախազի 2018թ. ապրիլի 26-ի թիվ 44 հրամանի թիվ 1 հավելվածի 36-րդ, 37-րդ կետերով՝ Հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ՝

Կ. Հ.-ն համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ ներառելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված ծառայողական առաջխաղացման ցուցակում: